

Հաստատված է

Գրանցված է

«ԿԻԼԻԿԻԱ»

Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն  
Սահմանափակ Պատասխանատվությամբ  
Ընկերության

միակ հիմնադրի 27.03.2012թ.

թիվ 09 որոշմամբ

միակ հիմնադրի

Հայաստանի Հանրապետության

Կենտրոնական բանկում

Գրանցման համար

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի

\_\_\_\_\_ 2012թ-ի թիվ \_\_\_\_\_ որոշմամբ



/Վարդան Պանդյան/

\_\_\_\_\_ /Արթուր Զավադյան/

## «ԿԻԼԻԿԻԱ»

**ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ**

**ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

Երևան, 2012 թ.

Գլուխ 1  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ԿԻԼԻԿԻԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Վարկային կազմակերպություն) հանդիսանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնադրված և լիցենզավորված շահույթ հետապնդող ինքնուրույն իրավաբանական անձ, որն իր գործունեության իրականացման ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այլ օրենքներով ու իրավական ակտերով, ինչպես նաև սույն Կանոնադրությամբ:

1.2 Վարկային կազմակերպությունն ունի իր մասնակիցների գույքից առանձնացված, ինքնուրույն հաշվեկշռում հաշվառված գույք: Վարկային կազմակերպությունն իրավունք ունի բացել ՀՀ և օտարերկրյա արժույթով հաշվարկային հաշիվներ՝ իր դրամական միջոցները պահելու, հաշվարկային, վարկային և դրամական բոլոր տեսակի գործառնություններն իրականացնելու համար:

1.3 Վարկային կազմակերպության իրավունակությունը ծագում է ՀՀ Կենտրոնական բանկում գրանցվելու և վերջինիս կողմից լիցենզավորվելու և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին ՀՀ Կենտրոնական բանկում գրառման) պահից:

1.4 Վարկային կազմակերպությունն ունի իր անվանումը (հայերեն, անգլերեն և ռուսերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.5 Վարկային կազմակերպության անվանումն է՝

Հայերեն

լրիվ՝ «ԿԻԼԻԿԻԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

կրճատ՝ «ԿԻԼԻԿԻԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ

Անգլերեն

լրիվ՝ "KILIKIA" UNIVERSAL CREDIT ORGANISATION Limited liability company

կրճատ՝ "KILIKIA" U.C.O L.L.C.

Ռուսերեն

լրիվ՝ «КИЛИКИА» УНИВЕРСАЛЬНАЯ КРЕДИТНАЯ ОРГАНИЗАЦИЯ ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ

կրճատ՝ «КИЛИКИА» У.К.О О.О.О

1.6 Վարկային կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հրազդանի կիրճ 4/1:

1.7 Վարկային կազմակերպությունն ստեղծվում է անսահմանափակ ժամկետով:

## Գլուխ 2

### ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՈԼՈՐՏՆԵՐԸ

2.1 Վարկային կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն Կանոնադրության պահանջներին համապատասխան:

2.2 Վարկային կազմակերպության նպատակն է որպես ձեռնարկատիրական գործունեություն փոխառություններ ներգրավումը և (կամ) նմանատիպ գործարքների կնքումը և (կամ) վարկերի տրամադրումը և (կամ) «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ ներդրումների կատարումը:

2.3 Վարկային կազմակերպությունն իրավունք ունի զբաղվելու բացառապես «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով, եթե այլ բան չի նախատեսվում ՀՀ օրենսդրությամբ:

2.4 Վարկային կազմակերպությունը սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակներն իրագործելու համար իրավասու է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա զբաղվել գործունեության հետևյալ տեսակներով.

2.4.1 օրենքով սահմանված կարգով ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ՝ այդ թվում ներդրումային (պարտատոմսեր) և վճարային արժեթղթերի հրապարակային թողարկում (բացառությամբ ներդրումային հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերի) կամ այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հետ:

2.4.2 տրամադրել ձեռնարկատիրական և (կամ) սպառողական վարկեր, երաշխիքներ, ինչպես նաև իրականացնել ֆակտորինգ,

2.4.3 օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով իր անունից թողարկել և տեղաբաշխել առանց ապահովման պարտատոմսեր՝ իր կանոնադրական հիմնադրամը չգերազանցող գումարի չափով, երրորդ անձանց կողմից տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր,

2.4.4 իր անունից թողարկել ճանապարհային չեկեր, իրկանացնել այդ չեկերի առուվաճառք, թողարկել վարկային քարտեր, իրականացնել այդ քարտերի սպասարկումը,

- 2.4.5 մատուցել ֆինանսական խորհրդատվություն, ինչպես նաև ֆինանսական գործակալի ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն,
- 2.4.6 անկանխիկ եղանակով գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ
- 2.4.7 իրականացնել ֆինանսական վարձակալություն,
- 2.4.8 ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքի հետ ստացման գործունեություն,
- 2.4.9 իրականացնել ցանկացած այլ օրինական գործունեություն՝ ուղղված սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործմանը:

### Գլուխ 3

#### ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1 ՀՀ օրենսդրության համաձայն Վարկային կազմակերպությունը որոշում է իր կառավարման կառուցվածքը, որոշումների կայացման կարգը, շուկայավարման, գնագոյացման, աշխատողների վարձատրության քաղաքականությունները, ֆինանսավորման կառուցվածքը, շահույթի բաշխումը, ինչպես նաև իր գործարար գործունեության և ներքին կառավարման բոլոր այլ առանձնահատկությունները:
- 3.2 Վարկային կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի.
  - 3.2.1 իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,
  - 3.2.2 տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին Հայաստանում և արտերկրում,
  - 3.2.3 ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ՀՀ տարածքում և դրանից դուրս,
  - 3.2.4 հաստատել տեղական և միջազգային կապեր, անդամակցել տեղական և միջազգային կազմակերպություններին,
  - 3.2.5 միջազգային ֆինանսական կազմակերպություններից, դոնորներից, վարկատուներից և այլ վարկային հաստատություններից ստանալ վարկեր և փոխառություններ այնպիսի պայմաններով և արժույթով, որոնք վարկային կազմակերպությունը կարող է ընդունելի համարել, եթե այն արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև ապահովել փոխառված, ներգրավված կամ պարտք միջոցների վճարումը Վարկային կազմակերպության գույքով, գույքային իրավունքներով կամ այլ ակտիվներով, կամ դրանց մի մասով, և իրականացնել ցանկացած այլ գործունեություն, որը կնպաստի սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործմանը,
  - 3.2.6 ՀՀ տարածքում կատարել ուղղակի ներդրումներ և գործառույթներ արժեթղթերում՝ արժեթղթերը և ներդրումային գործունեությունը

- կարգավորող գործող օրենսդրության համաձայն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին և սույն Կանոնադրության համաձայն,
- 3.2.7 գնել և վաճառել պարտատոմսեր, իրականացնել ֆինանսական վարձակալության գործառնություններ, որոնցում Վարկային կազմակերպությունը հանդես է գալիս որպես միջնորդ որևէ գույքի մատակարարի և արտադրողի միջև՝ ֆինանսավորել մատակարարի կամ արտադրողի գույքի վաճառքը հաճախորդին տրվող վարկի պայմաններով այդ գույքը գնելու և վաճառելու միջոցով,
  - 3.2.8 միևնույն իրավաբանական կամ ֆիզիկական անձին տրամադրել վարկեր, որոնց գումարը չի կարող գերազանցել վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի 25 %-ը,
  - 3.2.9 ներքին իրավական ակտերով սահմանել տոկոսադրույքներ, միջնորդավճարներ և վարկ տրամադրելու առնչությամբ մատուցված այլ ծառայությունների դիմաց գանձվող վճարներ,
  - 3.2.10 Վարկային կազմակերպության նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով օրենքով սահմանված կարգով իրացնել և վաճառել գրավատուի կողմից գրավադրված գույքը,
  - 3.2.11 ՀՀ այլ վարկային և ֆինանսական կազմակերպությունների, իրավաբանական անձանց և քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց հետ ստեղծել միավորումներ և այլ միություններ,
  - 3.2.12 խմբավորել իր ակտիվները և վարկային պորտֆելը, հնարավոր կորուստները ծածկելու նպատակով ձևավորել պահուստներ, դուրս գրել անհուսալի վարկերը, ինչպես նաև ճշգրտել հնարավոր կորուստների պահուստի չափը ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան,
  - 3.2.13 իր մասնակիցների և երրորդ անձանց հետ կնքել գործարքներ ՀՀ օրենսդրությամբ այլ իրավական և սույն կանոնադրության համաձայն, ներմուծել և արտահանել իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ,
  - 3.2.14 իրականացնել իր ֆինանսական գործունեությունը կամ դրամով կամ այլ արտարժույթով՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,
  - 3.2.15 իրականացնել Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով չարգելված այլ գործունեություն:
  - 3.2.16 Վարկային կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքում և կարգով:

#### Գլուխ 4

#### ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Վարկային կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Վարկային կազմակերպությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

4.2 Վարկային կազմակերպության մասնակիցները պատասխանատու չեն Վարկային կազմակերպության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների սահմաններում կրում են Վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

4.3 ՀՀ Կենտրոնական բանկը և Վարկային կազմակերպությունը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար:

#### Գլուխ 5

##### ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

5.1 Վարկային կազմակերպության գույքը պատկանում է Վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով: Վարկային կազմակերպության գույքը ներառում է.

5.1.1 բաժնեմասերի դիմաց վճարման տեսքով մասնակիցների ներդրած բոլոր միջոցները,

5.1.2 Վարկային կազմակերպության գործունեությունից ստացված եկամուտը,

5.1.3 չբաշխված շահույթը,

5.1.4 ՀՀ օրենսդրության սահմանված կարգով Վարկային կազմակերպության ձեռք բերված գույքը:

5.2 Վարկային կազմակերպության կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման և դրանց դադարեցման հետ կապված բոլոր խնդիրները, գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

5.3 Վարկային կազմակերպության գույքը կարող է առգրավվել միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

#### Գլուխ 6

##### ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՀԱՎԱՔ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՓԱՅԵՐԸ, ԱՅԼ ՐԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

6.1 Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն չափից: Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 204.000.000 ՀՀ դրամ, որը բաղկացած է 100 բաժնեմասից, յուրաքանչյուր բաժնեմասի անվանական արժեքը 2.040.000 ՀՀ դրամ, ընկերության միակ հիմնադիրը Վարդան Դանդայանն է (անձնագիր AM0568310 տրված 005-ի կողմից 20.12.2011թ., սոց.քարտ 3102760384, բնակվող ՀՀ, ք.Երևան, Դ.Մալյան 6շ. 22բն.):

6.2 Վարկային կազմակերպության բաժնեհավաք կապիտալը կարող է ավելացվել միայն նրա ամբողջությամբ վճարելուց հետո՝ Վարկային կազմակերպության գույքի

հաշվին կամ մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին կամ երրորդ անձանց ավանդների հաշվին, կամ երրորդ անձանց ավանդների հաշվին՝ օրենքով սահմանված կարգով:

6.3 Վարկային կազմակերպություն ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Վարկային կազմակերպության պահուստային հիմնադրամը ձևավորվում է Վարկային կազմակերպության զուտ շահույթից տարեկան պարտադիր 5 տոկոս հատկացումների հաշվին՝ մինչև հիմնադրամը հասնի կանոնադրական կապիտալի 15 տոկոսին: Պահուստային հիմնադրամը կարող է օգտագործվել Վարկային կազմակերպության կորուստները ծածկելու, ինչպես նաև պարտատոմսերը նարելու և բաժնեմասերը հետ գնելու համար, եթե այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

6.4 Վարկային կազմակերպությունը կարող է ՀՀ գործող օրենսդրության պահանջները կատարելու նպատակով ստեղծել այլ հիմնադրամներ:

## Գլուխ 7

### ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ

7.1 Վարկային կազմակերպության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը կամ դրա մի մասը վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ Վարկային կազմակերպության մեկ կամ մի քանի մասնակիցների:

7.2 Մասնակցը կարող է իր բաժնեմասը կամ դրա մի մասը օտարել երրորդ անձանց:

7.3 Վարկային կազմակերպության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը կամ դրա մի մասը գնելու նախապատվության իրավունքից /բացառությամբ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի/, այն գնով որն առաջարկվել է երրորդ անձանց:

7.4 Վարկային կազմակերպության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձին, պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել Վարկային կազմակերպությանը՝ նշելով գինն ու վաճառքի մյուս պայմանները: Վարկային կազմակերպությունն տեղեկացվելու օրվանից տասնօրյա ժամկետում դրա մասին ծանուցում է Վարկային կազմակերպության մասնակիցներին:

7.5 Այն դեպքում, երբ Վարկային կազմակերպության մասնակիցները տեղեկացվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ մյուս մասնակիցների համաձայնությամբ նախատեսված այլ ժամկետում չեն օգտվում գնելու նախապատվության իրավունքից, մասնակցի բաժնեմասը կարող է օտարվել երրորդ անձանց՝ նույն պայմաններով և ոչ պակաս այն գնից, որն առաջարկվել էր նրա մասնակիցներին:

7.6 Սույն Կանոնադրությամբ և Օրենքով նախատեսված՝ գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնեմասի վաճառքի դեպքում Վարկային կազմակերպության ցանկացած մասնակից և (կամ) Վարկային կազմակերպությունը, իրավունք ունի վեց ամսվա ընթացքում դատական կարգով

պահանջել անվավեր ճանաչելու այդ գործարքը, սկսած այն պահից, երբ նրանք իմացել են կամ պարտավոր էին իմանալ խախտման մասին:

7.7 Բաժնենմասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:

7.8 Վարկային կազմակերպությունը պետք է գրավոր կերպով տեղեկացվի բաժնենմասի օտարման մասին՝ օտարման փաստը հաստատող ապացույցների ներկայացման հետ միասին:

7.9 Բաժնենմասը ձեռք բերողին փոխանցվում են վարկային կազմակերպության մասնակցի՝ մինչև բաժնենմասի օտարումը ծագած իրավունքները և պարտականությունները:

7.10 Նշանակալից մասնակցություն հանդիսացող բաժնենմասի օտարման և ձեռքբերման նկատմամբ գործում են «Վարկային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

## Գլուխ 8

### ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Վարկային կազմակերպության մասնակիցներն այն ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով սեփականության իրավունքով ձեռք են բերել Վարկային կազմակերպության բաժնենմասեր:

8.2 Վարկային կազմակերպությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 մասնակից: Եթե մասնակիցների թիվը 49-ից ավել է դարձել, ապա Վարկային կազմակերպությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության կամ համապատասխանաբար կրճատի իր մասնակիցների թիվը: Հակառակ դեպքում վարկային կազմակերպությունը ենթակա է լուծարման դատական կարգով:

8.3 Վարկային կազմակերպության մասնակիցներն իրավունք ունեն.

8.3.1 սույն կանոնադրության համաձայն մասնակցել Վարկային կազմակերպության կառավարմանը,

8.3.2 Վարկային կազմակերպության գրավոր դիմելու դեպքում եռօրյա ժամկետում տեղեկություններ ստանալ կազմակերպության գործունեության վերաբերյալ,

8.3.3 ստանալ վարկային կազմակերպության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը,

8.3.4 Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր բաժնենմասը կամ դրա մասը օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց,

8.3.5 Վարկային կազմակերպության լուծարման դեպքում սահմանված կարգով բաժին ստանալ ընկերության մնացած գույքից,

8.3.6 Անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով մասնակցել Վարկային կազմակերպության մասնակիցների ժողովին՝ վերջինիս ընթացքում քննարկվող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

- 8.3.7 Ստանալ մասնակիցների ժողովների մասին գրավոր ծանուցում և այդ ժողովների համար առաջարկվող օրակարգը,
- 8.3.8 Առաջարկներ անել Վարկային կազմակերպության մասնակիցների ժողովի ընթացքում,
- 8.3.9 ՀՀ օրենսդրությամբ կարգով դիմել դատարան և բողոքարկել մասնակիցների ժողովի կողմից ընդունված որոշումները,
- 8.3.10 Օգտվել օրենքով սահմանված այլ իրավունքներից,
- 8.4 Վարկային կազմակերպության մասնակիցները պարտավոր են.
  - 8.4.1 Ներդրումներ կատարել Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով,
  - 8.4.2 Չիրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գախստիք պարունակող տեղեկություններ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերից,
  - 8.4.3 Վարկային կազմակերպությանը ծանուցել բաժնեմասերի օտարման, կամ գրավադրման, կամ հասցեի ցանկացած փոխառության մասին,
  - 8.4.4 կրել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

#### Գլուխ 9

#### ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ: ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐ

- 9.1 Վարկային կազմակերպությունը իրավունք ունի տարեկան մեկ անգամ ընդհանուր ժողովի որոշմամբ իրականացնել իր շահույթի բաշխում Վարկային կազմակերպության մասնակիցների միջև՝ ըստ կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:
- 9.2 Վարկային կազմակերպությունն իրավունք չունի որոշում ընդունել ընկերության մասնակիցների միջև իր շահույթի բաշխման մասին կամ վճարել ընկերության մասնակիցներին շահույթ, որի բաշխման մասին որոշումն արդեն ընդունված է՝
  - 9.2.1 Մինչև Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը,
  - 9.2.2 Եթե որոշման ընդունման պահին ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է նրա կանոնադրական կապիտալից ր պահուստային ֆոնդից կամ այդ չափից փոքր կդառնա նման որոշման ընդունման արդյունքում,
  - 9.2.3 Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

#### Գլուխ 10

#### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 10.1 Ընկերության կառավարման մարմիններն են՝
  - 1) Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը,
  - 2) Ընկերության խորհուրդը,
  - 3) Ընկերության վարչությունը և գործադիր տնօրենը:

- 10.2 Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:
- 10.3 Ընկերության բոլոր մասնակիցներն իրավունք ունեն ներկա գտնվելու Ընդհանուր ժողովին, մասնակցել օրակարգի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս:
- 10.4 Ընկերության յուրաքանչյուր մասնակից Ընդհանուր ժողովում ունի Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:
- 10.5 Ընկերության մասնակիցներն իրավասու են մասնակցել ընդհանուր ժողովին անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Ընկերության մասնակիցների ներկայացուցիչները պետք է ներկայացնեն իրենց լիազորությունները հաստատող փաստաթղթեր:
- 10.6 Ընկերության ընդհանուր ժողովը ընտրում է իր նախագահին:
- 10.7 Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝
- 1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ դրանց մասնակցելու հարցերը,
  - 2) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
  - 3) Ընկերության վերակազմակերպումը,
  - 4) Ընկերության լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, լուծարային հաշվեկշռի հատուցումը,
  - 5) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,
  - 6) Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը,
  - 7) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
  - 8) Ընկերության խորհրդի ձևավորումը, խորհրդի անդամների ընտրությունն ու նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը, խորհրդի կանոնակարգի հաստատումը,
  - 9) Ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորություններից վաղաժամկետ դադարեցումը. Ընկերության գործադիր մարմինների անդամների վարձատրության չափի սահմանումը, գործադիր մարմնի կանոնակարգի հաստատումը,
  - 10) Ընկերության արտաքին աուդիտ իրականացնող անձի ընտրությունը,
  - 11) Ընկերության խորհրդի կողմից համաձայնեցված՝ Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Ընկերության ներքին փաստաթղթեր) ընդունումը (հաստատումը),
  - 12) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,
  - 13) Ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը,
  - 14) «Սահմանապակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,
  - 15) «Սահմանապակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խոշոր գործարքներ, որոնց արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալի 50տոկոսից ավելին),
  - 16) Օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:
- 10.8 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Ընկերության խորհրդի կամ գործադիր մարմինների որոշմանը, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

10.9 Ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի լուծումը կատարվում է Ընդհանուր ժողովի նիստում կամ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է Օրենքով սահմանված կարգով:

Ընդհանուր ժողովն իրավագոր է, եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների կեսից ավելին: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը) Ընդհանուր ժողովը իրավասու է բոլոր մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայացման դեպքում:

Սույն կանոնադրության 10.7 կետի 3 և 4 ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների կողմից միաձայն:

Սույն կանոնադրության 10.7 կետի 2 և 5 ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն երկու երրորդ մեծամասնությամբ:

Մյուս հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների ձայների թվի պարզ մեծամասնությամբ, եթե Օրենքով տվյալ հարցի վերաբերյալ որոշում ընդունելու համար ավելի մեծ թիվ նախատեսված չէ:

Խորհրդակցական ձայնի իրավունքով Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն` Ընկերության խորհրդի և գործադիր մարմինների անդամները, աուդիտն իրականացնող անձը և ներքին աուդիտորը:

Ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է արձանագրության վարումը: Արձանագրությունների գիրքը ցանկացած ժամանակ պետք է ներկայացվի մասնակիցներին: Նրանց պահանջով արձանագրությունների գրքից տրվում են գործադիր մարմնի կողմից հաստատված քաղվածքներ:

10.10 Հերթական ընդհանուր ժողովները գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Հերթական Ընդհանուր ժողովները գումարվում են հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո` 4 ամսվա ընթացքում: Արտահերթ նիստեր գումարվում են Ընկերության վարչության կողմից` սույն կանոնադրությունում նշված հանգամանքների առկայության դեպքում, ինչպես նաև այն բոլոր դեպքերում, եթե դա են պահանջում Ընկերության և նրա մասնակիցների շահերը: Ընդհանուր ժողովները հրավիրում և անց են կացվում Օրենքով և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով:

10.11 Ընկերության խորհրդի իրավասություններն են`

- 1) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, նրանց կանոնադրությունների հաստատումը,
- 2) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
- 3) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- 4) Ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- 5) Ընկերության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատանքային կանոնակարգերի, աշխատանքային ծրագրերի հաստատումը, դրանց վերաբերյալ հաշվետվություններ ընդունումը:
- 6) Ընկերության ժողովի կողմից հաստատված փաստաթղթերով նախատեսված դեպքերում Ընկերության գործառնությունների կատարման ընթացակարգերի, հրահանգների, մեթոդական ցուցումների, ուղեցույցների և ներքին իրավական այլ ակտերի հաստատումը,
- 7) Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների (տոկոսադրույքներ, ծառայության վճարներ և այլ պայմանների), ռիսկերի սահմանաչափերի սահմանումը,
- 8) Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում Ընկերության կողմից իրականացվող ակտիվային ու պասիվային գործարքների կատարման,

դրանց պայմանների սահմանման և սպասարկման վերաբերյալ որոշումների ընդունումը,

9) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր գործառույթների իրականացումը ,

10) Ընկերության աշխատատեղերի հաստատումը,

11) Ընկերության ներքին աուդիտորի նշանակումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների սահմանումը,

12) Ընկերության վարչության անդամների և ներքին աուդիտորի նկատմամբ խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ որոշումների ընդունումը,

13) Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

14) Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը,

15) Ընկերության տարածքային ստորաբաժանումների ղեկավարների նշանակումը,

16) Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

17) «Սահմանապակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խոշոր գործարքներ, որոնց արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալի 20-50տոկոսը):

10.12 Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ սույն կանոնադրությամբ և Խորհրդի կանոնակարգով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

10.13 Ընկերության խորհուրդը բաղկացած է խորհրդի նախագահից և երկու անդամից:

10.14 Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

10.15 Ընկերության խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության մասնակից չհանդիսացող անձ:

10.16 Ընկերության խորհրդի ձևավորման և գործունեության, նիստերի գումարման և անկացման կարգը, խորհրդի իրավասությունները, նրա անդամների լիազորությունների դադարեցման կարգը, խորհրդի նախագահի իրավասությունները սահմանվում է սույն կանոնադրությամբ և Ընկերության խորհրդի կանոնակարգով:

10.17 Ընկերության խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ: Ընկերության խորհրդի նիստերը գումարում է Ընկերության խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Ընկերության գլխավոր տնօրենի (վարչության), ներքին աուդիտորի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, ՀՀ Կենտրոնական բանկի, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնեմասերի 5(հինգ) կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (մասնակիցների) գրավոր պահանջով:

10.18 Ընկերության խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով նիստերի գումարման և ացկացման կարգի համաձայն: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ

կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Ընկերության հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Ընկերության խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Ընկերության խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

10.19 Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների միջոցով:

Քվեաթերթիկը պետք է բովանդակի՝

ա) Ընկերության ֆիրմային անվանումը,

բ) քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը,

գ) քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ “կողմ”, “դեմ” և “ձեռնպահ”,

դ) լրացված քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,

ե) ցուցում այն նասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի խորհրդի անդամի կողմից,

զ) քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

Քվեաթերթիկի տիպային ձևը սահմանվում է խորհրդի կանոնակարգով:

10.20 Խորհրդի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի կողմից հաստատած խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Չայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

10.21 Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Ընկերության գլխավոր տնօրենի մասնակցությամբ, բացառությամբ Ընկերության գլխավոր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Ընկերության գլխավոր տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

10.22 Ընկերության խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից խորհրդի անդամների կազմից: Ընկերության խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է խորհրդի աշխատանքները,

բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը,

գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ) նախագահում է Ընկերության Ընդհանուր ժողովում,

ե) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը,

զ) Ընկերության անունից կնքում է աշխատանքային պայմանագրեր՝ Ընկերության վարչության անդամների և ներքին աուդիտորի հետ,

է) իրականացնում է Ընկերության խորհրդի կանոնակարգով իրեն վերապահված այլ գործառույթները:

10.23 Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

10.24 Ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Ընկերության խորհրդի անդամ (Ընկերության ղեկավար),

գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից՝ անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն կետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն,

դ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել է կամ զրկվել է որոշակի աշտոն վարելու իրավունքից:

10.25 Ընկերության վարչությունը և գլխավոր տնօրենը:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության գործադիր մարմինների՝ Ընկերության միանձնյա գործադիր մարմնի՝ գլխավոր տնօրենի և Ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի՝ վարչության կողմից:

Ընկերության միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ:

Ընկերության գործադիր մարմինների իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերից:

Գլխավոր տնօրենի և վարչության անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, Ընկերության կանոնադրությամբ, Ընկերության գործադիր մարմինների կանոնակարգով և Ընկերության ու նրանից յուրաքանչյուրի հետ կնքված պայմանագրով:

Ընկերության գործադիր մարմինները կազմակերպում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

10.26 Ընկերության գլխավոր տնօրենը՝

1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,

2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

3) գործում է առանց լիազորագրի,

4) տալիս է լիազորագրեր,

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

7) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, ընդունում է որոշումներ հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

8) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,

9) Վարչության քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառվող խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ և վարչության որոշման հիման վրա կիրառում է այդ միջոցները,

10) ղեկավարում է Վարչության աշխատանքը:

10.27 Գործարքը կամ մի քանի փոխկապաքցված գործարքները, որոնք կապված են Ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի (որոնց) արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու նասին որոշման ընդունման օրվա դրությամբ

Ընկերության կանոնադրական կապիտալի մինչև 5 տոկոսը, կատարվում է Ընկերության գլխավոր տնօրենի որոշմամբ:

10.28 Ընկերության վարչությունը գործում է սույն կանոնադրության, ինչպես նաև Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատված Ընկերության գործադիր մարմինների կանոնակարգի հիման վրա, որոնք սահմանում են նաև վարչության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

10.29 Վարչության նիստերն արձանագրվում են: Վարչության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին, Խորհրդին, ներքին աուդիտորին, ՀՀ կենտրոնական բանկին և Ընկերության աուդիտն իրականացնող անձին՝ վերջիններիս պահանջով:

Ընկերության վարչությունը ներառում է Ընկերության գլխավոր տնօրենին, նրա տաղակալին (տեղակալներին), գլխավոր հաշվապահին: Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ վարչության կազմում կարող են ընդգրկվել նաև Ընկերությունում այլ պաշտոններ զբաղեցնող անձինք:

Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Ընկերության գլխավոր տնօրենը, որն ստորագրում է նիստի որոշումները և արձանագրությունը: Ընկերության գլխավոր տնօրենը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Վարչության նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության:

Վարչության նիստերը իրավազոր են, եթե նիստին ներկա են Վարչության անդամների կեսից ավելին:

Վարչության որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայների հավասարության դեպքում գործադիր տնօրենի ձայնը վճռորոշ է:

Ընկերության վարչությունն իրավասու է՝

1) Ընկերության Խորհրդի հաստատմանը ներկայացնել Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, Ընկերության աշխատակիցների աշխատավարձի դրույքաչափերը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները,

2) Ընկերության Խորհրդի համաձայնեցմանը և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել Ընկերության ներքին իրավական ակտերի նախագծերը,

3) որոշումներն ընդունել Ընկերության կողմից իրականացվող ակտիվային և պասիվային գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և սպասարկման վերաբերյալ,

4) քննարկել ստուգումների նյութերը և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,

5) որոշումներ ընդունել հերթական և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարման մասին, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

6) որոշումներ ընդունել Ընկերության աշխատակիցների (բացառությամբ վարչության անդամների և ներքին աուդիտորի) նկատմամբ խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ,

7) որոշումների ընդունել Օրենքով նախատեսված և Վարչության իրավասությանը ենթակա այլ հարցերի վերաբերյալ

8) որոշումներ ընդունել Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված և Վարչության իրավասությանը ենթակա այլ հարցերի վերաբերյալ:

10.30 Գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի/որոնց արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ

ընկերության կանոնադրական կապիտալի 5-ից մինչև 20 տոկոսը կատարվում է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից՝ Ընկերության վարչության որոշմամբ:

10.31 Գործարքները, որոնց կատարման մեջ առկա է Ընկերության խորհրդի անդամի, Ընկերության գործադիր մարմնի գործառույթները կատարող անձի շահագրգռվածությունը կամ Ընկերության մասնակցի շահագրգռվածությունը, և որոնք ունեն Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի քսան և ավելի տոկոսը, կարող են կատարվել միայն Ընդհանուր ժողովի համաձայնությամբ:

10.32 Ընկերության կառավարման մարմինների անդամների պատասխանատվությունը:

Ընկերության խորհրդի անդամները, գլխավոր տնօրենը և վարչության անդամները իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

Ընկերության խորհրդի անդամները, գլխավոր տնօրենը և վարչության անդամները Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են կառավարման մարմնի այն անդամները, որոնք Ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

Ընկերության խորհրդի անդամների, գլխավոր տնօրենի և վարչության անդամների հրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը չի ազատում նրանց՝ Ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

Ընկերության խորհրդի անդամների, գլխավոր տնօրենի և վարչության անդամների պատասխանատվության հիմքերի և չափի որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործարար շրջանառության սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները:

Եթե սույն կետի դրույթներին համապատասխան Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում մի քանի անձ, ապա նրանք Ընկերության առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Անձն ազատվում է սույն հոդվածով սահմանված՝ Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությունը կկրի վնասներ:

## Գլուխ 11

### ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍՎՈՒՄԸ

11.1 ՀՀ օրենսդրությամբ պահանջվող կարգով Վարկային կազմակերպության գործունեությունը տարին մեկ անգամ ստուգվում է արտաքին աուդիտի, այսինքն՝ անկախ աուդիտորական ընկերության կողմից, որը լիցենզավորվել է ՀՀ տարածքում նման ստուգումները իրականացնելու համար և այլ առումներով իրավասու է աուդիտորական հաշվետվություններ ներկայացնել ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան:

## Գլուխ 12

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 12.1 Վարկային կազմակերպության այն աշխատողները, որոնք պատասխանատու են հաշիվների և ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստման և վարման համար, պատասխանատվություն են կրում հաշվետվություններում պարունակվող տեղեկությունների իսկության, ՀՀ օրենսդրությամբ պահանջվող կարգով փաստաթղթային ու էլեկտրոնային տեսքով հաշվառումների պատշաճ և անվտանգ պահպանման, ինչպես նաև Վարկային կազմակերպության ֆինանսական և այլ հաշվետվությունները ժամանակին ՀՀ Կենտրոնական բանկին, մասնակիցներին և ՀՀ այլ իրավասու մարմինների ներկայացնելու համար:
- 12.2 Վարկային կազմակերպության ֆինանսական տարին հանընկնում է օրացուցային տարվա հետ:
- 12.3 Վարկային կազմակերպությունը պարտավոր է ապահովել Վարկային կազմակերպության գրառումների հասանելիությունը մասնակիցներին և պահանջի դեպքում տրամադրել դրանց պատճենները:

Գլուխ 13

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՈՒՍՏՐ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 13.1 Վարկային կազմակերպությունը կարող է ՀՀ-ում կամ օտարերկրյա պետությունների տարածքներում ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք իրավաբանական անձի կարգավիճակ չունեն: ՀՀ-ում ստեղծվելու դեպքում դրանք իրավունք կունենան գործելու ՀՀ Կենտրոնական բանկում հաշվառվելուց հետո, իսկ օտարերկրյա պետությունների տարածքներում ստեղծվելու դեպքում դրանք կարող են բացվել և գործել համապատասխան պետության օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն:
- 13.2 Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացումը, հաշվառումը և լուծարումն իրականացվում է ՀՀ օրենքով ը այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 13.3 Վարկային կազմակերպության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Վարկային կազմակերպության անունից, վերջինիս կողմից իրենց վերապահված լիազորությունների սահմաններում: Վարկային կազմակերպությունը պատասխանատու է իր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար: Մասնաճյուղերը ֆինանսական գործառնություններ են իրականացնում ՀՀ օրենսդրության համաձայն՝ դրամով կամ արտարժույթով, սույն կանոնադրության և համապատասխան մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության համաձայն:
- 13.4 Վարկային կազմակերպությունը հիմնադրման պահին մասնաճյուղեր և ներկայացուցչություններ չունի: Վերջիններիս ստեղծման դեպքում սույն Կանոնադրության մեջ կատարվում է համապատասխան փոփոխություն:
- 13.5 Վարկային կազմակերպությունը կարող է ՀՀ-ում կամ արտերկրում ստեղծել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր ընկերություններ կամ մասնակից լինել դրանց: ՀՀ-ում ստեղծվելու դեպքում դրանք ենթակա են

գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտերկրում ստեղծվելու դեպքում՝ համապատասխան պետության օրենքներով սահմանված կարգի համաձայն:

#### Գլուխ 14

##### ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԽՍԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒԽՍԸ

- 14.1 Վարկային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել ընդհանուր ժողովի որոշման հիման վրա, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն: Վերակազմակերպումը կարող է տեղի ունենալ միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման կամ վերակազմավորման ձևով: Վերջինիս դեպքում Վարկային կազմակերպության իրավունքները և պարտականությունները փոխանցվում են նրա իրավահաջորդին:
- 14.2 Վարկային կազմակերպության լուծարումը հանգեցնում է վարկային գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու և Վարկային կազմակերպության՝ որպես իրավաբանական անձի գոյության դադարեցման: Վարկային կազմակերպությունը կարող է լուծարվել հետևյալ կարգով.
  - 14.2.1 ՀՀ օրենսդրության համաձայն նման որոշում կայացնելու իրավասություն ունեցող համապատասխան դատարանի որոշմամբ
  - 14.2.2 Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ՀՀ Կենտրոնական բանկից նախապես ստացված համաձայնությամբ,
  - 14.2.3 ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 14.3 Անվճարունակության կամ սնանկության դեպքում Վարկային կազմակերպությունը լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն:
- 14.4 Վարկային կազմակերպության լուծարային հանձնաժողովը ստեղծվում է դատարանի կամ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումը կայացնելու պահից՝ առնվազն հնգօրյա ժամկետում, Վարկային կազմակերպությունը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Այն կազմվում է առնվազն երեք անդամից: Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է վարկային կազմակերպության գործադիր տնօրենը: Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում լուծարվող վարկային կազմակերպության կառավարման լիազորությունները:
- 14.5 Լուծարային հանձնաժողովը ստեղծելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս մամուլում և ժամուցում է Կենտրոնական բանկին Վարկային կազմակերպության լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից:
- 14.6 Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը: Օրենքով սահմանված հերթականությամբ պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը որը լուծարվող Վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը ներկայացնում է Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, կենտրոնական բանկը լուծարվող Վարկային կազմակերպության գրանցումից հանելու մասին գրառում է կատարում Վարկային կազմակերպությունների գրանցումների մատյանում,

որից հետո Վարկային կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած:

- 14.7 Պարտատերերի պահանջները բավարարվում է լուծարային միջոցների սեփականության իրավունքով Վարկային կազմակերպությանը պատկանող գույքի (միջոցների) հաշվին: Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած միջոցները բաշխվում են Վարկային կազմակերպության մասնակիցների միջև՝ վերջիններիս բաժնեմասերին համամասնորեն:

## Գլուխ 15 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1 Վարկային կազմակերպության և վերջինիս մասնակցի միջև ցանկացած նամակագրություն պետք է լինի գրավոր, այդ նամակագրությունն ուղարկող անձի ստորագրությամբ: Ծանուցումները և այլ գրությունները համարվում են պատշաճ կերպով տրված, երբ առաքվում են.

15.1.1 առձեռն՝ ստացման հաստատմամբ,

15.1.2 տեղեքսով, ֆաքսիմիլով կամ հաղորդման այլ միջոցներով՝ ստացման հաստատմամբ, կամ

15.1.3 պատվիրված փոստով,

սակայն պայմանով, որ այդ ծանուցումները և այլ գրություններն ուղարկվեն համապատասխան կողմի՝ մասնակիցների ռեեստրում նշված հասցեով:

15.2 Ծանուցումը համարվում է ստացված և օրինական ուժ ունի ստացման հաստատման օրվա դրությամբ: Մասնակիցը կարող է այդպիսի փաստաթղթերի և նամակագրության ստացման համար նշել ցանկացած այլ հասցե՝ այդ մասին ծանուցելով Վարկային կազմակերպությանը, ընդ որում, այդ դեպքում նման տեղեկություններն անհապաղ զետեղվում են մասնակիցների ռեեստրում:

Համարակալված, կնքված և  
կարված է 19 (տասնինը) թերթ

ԻՎ Լիցենզավորման ու գրանցման  
2-րդ բաժնի պետ

ամսն, ազգանուն, ստորագրություն

վերահսկող՝

ամսն, ազգանուն, ստորագրություն

